ցիշ չէ, որովհետև Ս. Գրիգոր ոչ թէ միայնացած է երևում, այլ իւր անձը ծածկած։ Այս վերջին հանգամանքի նկատմամբ միւս աւանդութիւններն աւելի վսեմ բացատրութիւն են տալիս, որ արժէ յիշատակել։ Պատմում են, թէ, երբ Ս. Արիստակէս գնաց Նիկիա՝ առաջին տիեզերական ժողովին ներկայ լինելու, Ս. Լուսաւորիչ ևս գնաց տարօն և չորս ամիս մնաց այնտեղ Անտոն և Կրոնիդէս ճգնաւորների մօտ. նոքա խորհուրդ տուին Ս. Լուսաւորչին այլ ևս չերևել աշխարհին. Ծածկեա՛ ըզքեզ, ասացին, յառաւել փառացդ մօտ ի ծերութիւնդ, որպէս զմեծն Մովսէս, զի մ ի պ ա շ տ ե ս ց ե ն զ ո ս կ ե ր ս ք ո նորադարձ ժողովուրդդ, և կամ գայթակղեսցին ի մեռանելն քո տկարամիտ կարծեօք։ Ս. Արիստակէսի բերած հաւատոյ հանգանակն ընդունելուց յետոյ, հետևելով յիշեալ խորհրդին, Ս. Գրիգոր առանձնացաւ Սեպուհ սարի վերայ և «ոչ ևս երևեցաւ յայտնեալ ումեք» «ի Մանեայ այրն կեցեալ աներևութաբար ամս բազումս։» Այդ ճգնութեան ժամանակ, ինչպէս աւանդութիւնն ասում է, Ս. Լուսաւորիչ կամեցաւ ծընկաչոք գնալ Երուսաղէմ՝ Ս. տեղերին երկրպագութիւն տալու. ծնկների վերայ գնալով, լիքաւ նա Սեպուհի գագաթից մինչև ստորոտն, ուր մի ձորակում նորա առջև ելան երկու սերովբէ և յայտնեցին Քրիստոսի պատգամը, որ ասում էր. Պատկա-